



**ՓԱՍՏԱՀԱՎԱՔ (ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ) ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ.  
ՄԻՋԱՂԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՓԱՍՏԱՀԱՎԱՔ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ**

**ԵՐԵՎԱՆ 2019**



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ .....	5
2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ .....	14
3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.....	18
4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	20
5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՑԸ.....	22
6. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄՈԴԵԼԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ .....	26



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Փաստահավաք հանձնաժողովները միջազգային պրակտիկայում ընդունված են որպես ճշմարտության, որոշ դեպքերում նաև՝ հաշտեցման հանձնաժողովներ<sup>1</sup>: Նման հանձնաժողովներ ստեղծվել են բազմաթիվ երկրներում՝ ուղղված այս կամ այն շրջանում կամ պատճառներով իրավունքների խախտումների և բռնությունների բացահայտմանը՝ որպես ճշմարտության որոնման գործընթացներ:

Փաստահավաք հանձնաժողովները ոչ դատական հետաքննական մարմիններ են, որոնք ուսումնասիրում և քարտեզագրում են անցյալում կատարված բռնությունների օրինաչափությունները և հայտնաբերում են այդ իրադարձությունների պատճառներն ու հետևանքները: Յուրաքանչյուր հանձնաժողով յուրահատուկ հաստատություն է, բայց դրանց հիմնական գործառույթները սովորաբար ներառում են զոհերի և վկաների կողմից արված վկայությունների հավաքագրումը, թեմատիկ հետազոտությունների իրականացումը, ներառյալ խախտումների պատճառների ու հետևանքների վերլուծությունը, հասարակական լսումների և իրազեկման այլ ծրագրերի կազմակերպումը և եզրափակիչ զեկույցի հրապարակումը, որով ուրվագծվում են բոլոր բացահայտումները և ներկայացվում են համապատասխան առաջարկությունները: Հանձնաժողովները ընդհանուր առմամբ գործում են ավելի նեղ և հստակ սահմանված իրավասության շրջանակով (մանդատով):

Այսպիսով, հանձնաժողովների ստեղծման պատմությունը վկայում է, որ մարդու իրավունքների ոտնահարման լուրջ խախտումների քարտեզագրումը և փաստագրումը կարևոր քայլ է ճշմարտության իրավունքի իրացման համար<sup>2</sup>:

Աշխարհի տարբեր երկրներում և տարբեր ժամանակահատվածներում ստեղծվել և գործել են (գործում են) 40-ից ավելի նման հանձնաժողովներ<sup>3</sup>, որոնք ընդգրկում են

<sup>1</sup> Այսուհետ այս երկու հասկացությունները կօգտագործվեն փոխարինելիորեն:

<sup>2</sup> UNITED NATIONS. GUIDANCE NOTE OF THE SECRETARY-GENERAL: United Nations Approach to Transitional Justice, էջ 8 ([https://www.un.org/ruleoflaw/files/TJ\\_Guidance\\_Note\\_March\\_2010FINAL.pdf](https://www.un.org/ruleoflaw/files/TJ_Guidance_Note_March_2010FINAL.pdf))



բավականին լայն աշխարհագրություն: Ինչպես նշվեց, այդ հանձնաժողովներից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, որոնց սակայն միավորում են բազմաթիվ ընդհանուր գծեր և ուղղություններ, որոնք ուսումնասիրվել և ամփոփվել են տարբեր միջազգային կառույցների, հատկապես՝ Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի<sup>4</sup> (International Center for Transitional Justice) զեկույցներում:

Ստորև ներկայացվում են հանձնաժողովների ստեղծման, կազմավորման, կառուցվածքի և գործունեության ընդհանուր գծերը և սկզբունքները<sup>5</sup>, ինչպես նաև, հաշվի առնելով ՀՀ դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությամբ ընդգծված հիմնական ուղղությունները՝ նախընտրելի հայեցակարգային մոդելը Հայաստանի Հանրապետության համար:

---

<sup>3</sup> [https://en.wikipedia.org/wiki/List\\_of\\_truth\\_and\\_reconciliation\\_commissions](https://en.wikipedia.org/wiki/List_of_truth_and_reconciliation_commissions)

<sup>4</sup> The International Center for Transitional Justice (<https://www.ictj.org/about>)

<sup>5</sup> Առավել մանրամասն՝ Truth Seeking: Elements of Creating an Effective Truth Commission, edited by Eduardo González and Howard Varney, 2013 (<https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Book-Truth-Seeking-2013-English.pdf>)



## **1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ**

### **1.1. Հանձնաժողովների կարգավիճակը և գործունեությունը պայմանավորված է հետևյալ հիմնական նպատակների իրացմամբ՝**

1) դրանք կոչված են հաստատելու բռնության դեպքերի վերաբերյալ մերժված կամ վիճելի փաստերը: Որոշ հանձնաժողովներ իրավասություն ունեն եզրակացություն տալու հետագա քրեական հետապնդում իրականացնելու անհրաժեշտության մասին:

2) դրանք պետք է պաշտպանեն, ճանաչեն և զորակցեն տուժողներին: Հանձնաժողովները տուժողների հետ պետք է համագործակցեն ոչ միայն որպես տեղեկատվության աղբյուրների, այլև որպես իրավատերերի և գործընկերների:

3) հանձնաժողովները պետք է իրազեկեն և խրախուսեն անձանց և հաստատությունների վարքագծի փոփոխությունը՝ դրանով իսկ նպաստելով սոցիալական և քաղաքական վերափոխմանը: Ճշմարտության հանձնաժողովի եզրափակիչ առաջարկությունները պետք է ուղղված լինեն խախտումների և չարաշահումների պատճառների բացահայտմանը՝ դրանց հետագա կրկնությունը բացառելու նպատակով:

4) բազմաթիվ հանձնաժողովներ ունեցել են նաև ազգային հաշտեցում իրականացնելու հստակ նպատակ: Հանձնաժողովները տարբեր կերպ են իմաստավորել այդ հաշտեցման գործառույթը՝ մի դեպքում տուժողների և իրավախախտների միջև հարաբերությունների կայացմամբ, մյուս դեպքում՝ պետական և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացմանն աջակցելով՝ վերականգնելու համար սոցիալական վստահությունը, մեկ այլ դեպքում էլ՝ հատուցումներ տրամադրելով: Լավագույն դեպքում հանձնաժողովները հաշտեցման համար պայմաններ կարող են ստեղծել՝ ինստիտուցիոնալ բարեփոխումների խրախուսման և տուժողների արժանապատվության վերականգնման միջոցով:





## **1.2. Հանձնաժողովների ընդհանուր խնդիրներն են՝**

- փաստերի պարզումը և պարզաբանումը,
- տուժողների իրավունքների պաշտպանությունը, ճանաչումը, վերականգնումը,
- դրական սոցիալ-քաղաքական փոփոխությունների իրականացումը:

Կարևոր է, որ հանձնաժողովի խնդիրները լինեն պարզ և հստակ ամրագրված, որպեսզի բոլոր շահագրգիռ անձինք ունենան իրական ակնկալիքներ հանձնաժողովի գործունեությունից:

## **1.3. Հանձնաժողովների հիմնական բնութագրական գծերն են՝**

### **1) քրեական արդարադատությանը լրացնող ինստիտուտ է.**

Հանձնաժողովները արդարադատության մարմիններ չեն: Նրանք քրեական պատասխանատվություն չեն սահմանում, պատժամիջոցներ չեն կիրառում: Եթե նրանք ձեռք բերեն հետաքննության համար օգտակար ապացույցներ, ապա դրանք կարող են աջակցել արդարադատության իրականացմանը:

### **2) կենտրոնացած է մարդու իրավունքների հիմնարար խախտումների բացահայտման վրա.**

Պատմականորեն, ճշմարտության հանձնաժողովները ուղղված են եղել մարդուն ֆիզիկական և հոգեկան բռնությունից և այլ ծանր հանցագործություններից պաշտպանությանը, սակայն ժամանակի ընթացքում նրանց դերն ընդլայնվել է՝ ներառելով նաև տնտեսական հանցագործությունները և կոռուպցիան՝ որպես ավտորիտար ռեժիմի դրսևորումներ:

### **3) ընդգրկում է խախտումների երկարատև ժամանակահատված.**

Ի տարբերություն խորհրդարանական քննիչ հանձնաժողովների, ճշմարտության հանձնաժողովների իրավազորությունը տարածվում է բավականին լայն ժամանակահատվածով դեպքերի վրա, ինչը հնարավորություն է տալիս հանձնաժողովներին բացահայտել պատմականորեն արմատավորված համակարգային խախտումները:



#### 1.4. Հանձնաժողովների գործառույթներն են՝

1) **զեկույցի կազմում**<sup>6</sup>, որով կհաստատվեն օբյեկտիվ և անկողմնակալ փաստեր մարդու իրավունքների խախտումների առնչությամբ՝ անդրադառնալով խախտումների բովանդակությանը, պատճառներին, առիթներին, բնույթին, էությանը և ծավալին:

2) **տեղեկատվության հավաքագրում**. հանձնաժողովները պետք է իրավասություն ունենան քննելու մարդու իրավունքների խախտումները, պետական քաղաքականության դրսևորումները, առանձնահատուկ դեպքերը և խախտումների պատճառները:

Հանձնաժողովը պետք է տեղեկություններ հավաքագրի կատարված դեպքերի վերաբերյալ՝ վկաներին և տուժողներին հարցաքննելու, փաստաթղթերն ուսումնասիրելու, այցելություններ իրականացնելու միջոցով:

Հանձնաժողովը այս գործառույթը պետք է իրականացնի՝ համագործակցելով պետական մարմինների հետ: Ընդ որում, հարցաքննությունների պատշաճ իրականացումն ապահովելու նպատակով հանձնաժողովը պետք է ունենա ակտեր, որոնցով մանրամասն կկարգավորվեն հարցաքննությունների և տեղեկատվության պահպանման և օգտագործման ընթացակարգերը:

Հանձնաժողովները, որպես կանոն տեղեկատվություն ստանում են տուժողների հետ առերես շփումների միջոցով: Դրանք կարող են իրականացվել կամ առանձին տարածքային ստորաբաժանումների ստեղծման կամ աշխատակազմից արտագնա հանդիպումների միջոցով: Բուն փաստերի հավաքման գործընթացը տևում է մի քանի ամսից մինչև մեկ տարի: Փաստեր հավաքող աշխատակիցները պետք է լինեն վերապատրաստված, հատուկ մասնագիտական հմտություններով օժտված անձինք:

Սովորաբար հանձնաժողովները իրենց գործունեության ընթացքում ստանում են 7 հազարից մինչև 20 հազար վկայություն տուժողներից, վկաներից, նույնիսկ իրավախախտներից<sup>7</sup>:

<sup>6</sup> Առավել մանրամասն, տե՛ս բաժին 5



3) **տուժողների պաշտպանություն.** Հանձնաժողովը փաստահավաք գործունեությունն իրականացնելուց պետք է ապահովի վկայություն տվողների անձնական անվտանգությունը: Հանձնաժողովը պետք է երաշխավորի, որ վկայություն տվողները չդիտվեն զուտ միայն որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ հանդես գան որպես գործընկերներ՝ նրանց արժանապատվությունը և իրավունքները ճանաչվելու և հարգվելու միջոցով:

Հանձնաժողովը պետք է ստեղծի անվտանգ միջավայր, որպեսզի տուժողները կարողանան վկայություններ տալ, ինչը կարող է պահանջել իրականացնել հոգեկան առողջության աջակցություն, ֆիզիկական պաշտպանություն, իրավական իրազեկումներ, սոցիալական ծառայությունների մատուցում և որոշ դեպքերում նաև ֆինանսական աջակցություն: Հանձնաժողովը ստացված տեղեկությունները պետք է քննի օբյեկտիվորեն և անաչառ ձևով՝ առանց կանխակալ վերաբերմունքի. հանձնաժողովի համար որևէ փաստ նախապես հաստատված փաստի ուժ չպետք է ունենա:

4) **հանրային քննարկումներ և իրազեկումներ.** հանձնաժողովը պետք է իրավասու լինի իրականացնելու հանրային իրազեկումներ, քննարկումներ, օգտագործելու զանգվածային լրատվության միջոցները: Սկզբնական շրջանում հանձնաժողովները իրենց գործողություններն իրականացնում էին առանց հասարակության ներգրավման: Հարավաֆրիկյան փորձից հետո լայն տարածում գտավ հանձնաժողովների և հասարակության լայն շերտերի միջև համագործակցությունը և շփումները: Այս առումով հետաքրքրական է Պերուի ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովի փորձը, որը համագործակցում էր երկրի խոշոր համալսարանների հետ՝ կամավորներ ներգրավելու համար, որոնք աջակցություն էին ցուցաբերում հանձնաժողովին՝ հասարակական լուսումների և այլ աշխատանքների կազմակերպման գործում:

Հասարակական քննարկումները և լուսումները կարող են վերաբերել կոնկրետ վկայություններին, որոշակի դեպքերին կամ անձանց և մարմիններին, և կարող են

<sup>7</sup> Մանրամասն, տե՛ս RULE-OF-LAW TOOLS FOR POST-CONFLICT STATES: Truth commissions, United Nations, New York and Geneva, 2006 (<https://www.ohchr.org/Documents/Publications/RuleoflawTruthCommissionsen.pdf>)





հեռարձակվել եթերով: Նման գործելաոճը բավականին արդյունավետ է համարվում և առաջարկվում է հաշվի առնել հանձնաժողովների ստեղծման ժամանակ<sup>8</sup>: Հանձնաժողովը պետք է հանրությանը պարբերաբար ներկայացնի իր աշխատանքի ուղղությունները և բնույթը, իրազեկումների միջոցով բավարար տեղեկատվություն տրամադրի տուժողներին և վկաներին, և այդ առումով պետք է երաշխավորել, որ հանձնաժողովի գործունեության բուն նպատակն ու գործառույթները ճիշտ ընկալվեն հանրության կողմից:

Իրազեկումները կարող են իրականացվել տեղեկատվական թերթիկների, ծանոթացման հանդիպումների և ԶԼՄ-ների հետ շփումների միջոցով: Պետք է ակտիվ օգտագործել նաև քաղաքացիական հասարակության հնարավորությունները: Իրազեկվածության ապահովումը իհարկե ինքնին չի ենթադրում, որ հանձնաժողովն իր ողջ լիազորություններն իրականացնելու է բոլորի համար բաց և մատչելի պայմաններում: Հանձնաժողովի գործունեության, հանդիպումների և հավաքված տեղեկատվության մեծ մասը պետք է լինի գաղտնի՝ մինչև համապատասխան զեկույցի ամբողջականացումն ու հրապարակումը: Այդ առումով հանձնաժողովներում ստեղծվում են հատուկ կարգեր և մեխանիզմներ՝ տեղեկատվության արտահոսքը կանխելու համար:

**5) բարեփոխումներին ուղղված առաջարկությունների ներկայացում.**

հանձնաժողովները կարող են օգտակար լինել՝ կանխելու մարդու իրավունքների հետագա խախտումները՝ դրանց պատճառների հայտնաբերման և դրանց համապատասխան առաջարկություններ ներկայացնելու միջոցով: Առաջարկությունները կարող են վերաբերել իրավունքի գերակայության ապահովմանը, իրավունքների պաշտպանության և լավ կառավարման մեխանիզմների բարելավմանը, կոռուպցիայի կանխարգելմանը և այլն:

Հանձնաժողովը կարող է առաջարկել նաև վերահսկողական և մշտադիտարկման մեխանիզմներ՝ ապահովելու համար առաջարկությունների ժամանակին և արդյունավետ իրագործումը:

**6) օժանդակություն արդարադատության համակարգի գործունեությանը.**

հանձնաժողովները կարող են աջակցել արդարադատության մարմինների աշխատանքին՝

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 20



խախտումների մանրակրկիտ ուսումնասիրության և դրանց վերաբերյալ փաստերի ու փաստաթղթերի ձեռք բերման միջոցով: Արդյունքում ձեռք բերված տեղեկությունները կարող են որպես ապացույց կիրառվել նախաքննության մարմինների կողմից:

Ուսումնասիրությունների և հետաքննությունների գործառույթը հաճախ մեկտեղվում է հանձնաժողովի մեկ ստորաբաժանման շրջանակներում, ըստ այդմ՝ իրականացվում են գործերի հետաքննություններ (case investigations)՝ կոնկրետ այս կամ այն գործով և դեպքով, ինչպես նաև թեմատիկ հետազոտություններ (thematic research):<sup>9</sup>

7) **հաշտեցման միջոցների կիրառում**. Միջազգային պրակտիկայում բազմաթիվ հանձնաժողովներ իրավասություն են ունեցել կազմակերպելու գործողություններ՝ նպաստելու անհատների, համայնքների և հակամարտության կողմերի հաշտեցմանը, հանդուրժողականության մթնոլորտի ձևավորմանը: Հանձնաժողովը կարող է հանդիսանալ հարթակ՝ հնարավորություն տալով կողմերին լսելու միմյանց դժգոհությունները, առաջարկելու միջոցներ իրավախախտների վերահիստեգրման համար և կազմակերպել միջոցառումներ հանրության շրջանակներում փոխըմբռնումն ու հանդուրժողականությունը խթանելու համար:

Այս առումով, օրինակ, **Հարավաֆրիկյան Հանրապետության Ճշմարտության և Հաշտեցման հանձնաժողովը**<sup>10</sup> (The South African Truth and Reconciliation Commission (TRC) Օրենքով օժտված էր հետևյալ գործառույթներով՝

- աջակցում և անհրաժեշտության դեպքում նախաձեռնում կամ համակարգում է հետաքննություններ (կատարում է հարցումներ) մարդու իրավունքների կոպիտ խախտումների, չարաշահումների վերաբերյալ՝ պարզելու այդ խախտումների բնույթը, պատճառները, սուբյեկտներին,

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 18

<sup>10</sup> Հարավաֆրիկյան Հանրապետության Ճշմարտության և Հաշտեցման հանձնաժողովը (The South African Truth and Reconciliation Commission (TRC) ստեղծվել էր՝ անդրադառնալու համար ապարտեիդի հետևանքով մարդու իրավունքների համակողմանի խախտումներին և բռնություններին: Հանձնաժողովի գործունեությունը կարգավորվում է 1995թ. Ազգային միասնության և հաշտեցման ակտով: Մանրամասն՝ Truth and Reconciliation Commission (<http://www.justice.gov.za/trc/>), Promotion of National Unity and Reconciliation Act 34 OF 1995 (<http://www.justice.gov.za/legislation/acts/1995-034.pdf>)



- հավաքագրում է տուժողների կամ նրանց ներկայացուցիչների վկայությունները խախտումների վերաբերյալ,
- կազմակերպում և իրականացնում է համաներումների շնորհումը,
- կազմում է համապարփակ գեկույց՝ ներկայացնելով իր գործունեությունը և արված բացահայտումները՝ հիմնված փաստական և օբյեկտիվ տեղեկատվության և ապացույցների վրա, որոնք հավաքվել կամ ստացվել են աշխատանքի արդյունքում,
- ներկայացնում է առաջարկություններ տուժածներին փոխհատուցման տրամադրման կամ ռեաբիլիտացիայի և արժանապատվության վերականգնման ուղղությամբ ձեռնարկվելիք քայլերի, հետագա խախտումները կանխելուն ուղղված վարչական և օրենսդրական միջոցառումների վերաբերյալ:

Հանձնաժողովի՝ հաշտեցման գործառույթի առումով առկա միջազգային փորձից բխում է նաև, որ այդ գործառույթը պետք է իրացվի միայն այն դեպքում, երբ իրավախախտում կատարած անձինք հայտնաբերվել են և արդարությունը վերականգնվել է: Արգենտինայի հանձնաժողովն, օրինակ, գտել է, որ հաշտեցում հնարավոր է միայն այն դեպքում, երբ իրավախախտում կատարած անձինք զղջացել են: Սալվադորի հանձնաժողովը գտել է, որ հաշտեցման համար անհրաժեշտ պայմաններն են ճանաչումը և ներումը, Գվատեմալայի հանձնաժողովը՝ ճշմարտությունը և արդարության վերականգնումը<sup>11</sup>:

### **1.5. Հանձնաժողովների իրավասությունների շրջանակը (մանդատը)**

Հանձնաժողովի իրավասության շրջանակը որոշ հարցերի կապակցությամբ պետք է լինի հստակ և համեմատաբար մանրամասն ձևակերպված, բայց և այնպես պետք է լինի բավարար ճկուն, որպեսզի անհարկի չսահմանափակվի հանձնաժողովի գործունեությունը: Ընդհանուր առմամբ գերադասելի է, որ հանձնաժողովի իրավասությունների շրջանակում չնշվեն այն հատուկ իրադարձությունները և դեպքերը, որոնք պետք է քննվեն նրա կողմից,

<sup>11</sup> Truth Commissions: An Uncertain Path? Comparative study of truth commissions in Argentina, Chile, El Salvador, Guatemala and South Africa from the perspectives of victims, their relatives, human rights organisations and experts ([https://www.apt.ch/content/files\\_res/Truth%20Comm\\_Executive%20Summary.pdf](https://www.apt.ch/content/files_res/Truth%20Comm_Executive%20Summary.pdf))



փոխարենը կարելի է օգտագործել առավել ընդհանրական կատեգորիաներ, որոնք կբնութագրեն՝ թե ինչ տեսակի խախտումներ պետք է ուսումնասիրի հանձնաժողովը: Գործնականում նման հանձնաժողովների իրավասությունն ընդգծելու համար կիրառվել են «բռնությունների լուրջ դեպքեր», «մարդու իրավունքների կոպիտ (էական) խախտումներ կատեգորիաները»<sup>12</sup>:

Հանձնաժողովի իրավասությունը որոշելու համար պետք է ընդգծվեն հետևյալ սահմանները՝

**- խախտումների շրջանակը.**

Քննության ենթակա խախտումների շրջանակը պետք է լինի հստակ շարադրված: Օրինակ՝ Պերուի հանձնաժողովի մանդատը ներառում էր խախտումների հետևյալ շրջանակը՝ ա) սպանություններ և առևանգումներ, բ) բռնի անհետացումներ, գ) խոշտանգում և այլ կոպիտ խախտումներ, դ) բնիկների և Անդյան համայնքների կոլեկտիվ իրավունքների խախտումներ, ե) այլ հանցագործություններ և մարդու իրավունքների կոպիտ այլ խախտումներ<sup>13</sup>:

**- խախտումների ժամանակահատվածը.**

Խախտումներն ընդգրկող ժամանակահատվածի առումով տարբեր հանձնաժողովներ հիմք են ընդունել մինչև 40 տարվա վաղեմության ժամանակահատվածը, որոշները՝ նույնիսկ մինչև մի քանի շաբաթվա: Երկար ժամանակահատվածի ուսումնասիրությունները բավականին բարդ գործընթացներ են, ինչը պահանջում է բավարար ռեսուրսներով ապահովվածություն այդ ուսումնասիրությունները պատշաճ իրականացնելու համար:

**- խախտումների սուբյեկտները.**

<sup>12</sup> See RULE-OF-LAW TOOLS FOR POST-CONFLICT STATES: Truth commissions, United Nations, New York and Geneva, 2006 (<https://www.ohchr.org/Documents/Publications/RuleoflawTruthCommissionsen.pdf>), էջ 8

<sup>13</sup> Truth Commissions: An Uncertain Path? Comparative study of truth commissions in Argentina, Chile, El Salvador, Guatemala and South Africa from the perspectives of victims, their relatives, human rights organisations and experts, էջ 33 ([https://www.apt.ch/content/files/res/truth\\_commissions\\_executive\\_summaries.pdf](https://www.apt.ch/content/files/res/truth_commissions_executive_summaries.pdf))



Վաղ շրջանի հանձնաժողովները, օրինակ՝ Արգենտինայի Անհետացածների հանձնաժողովը, կենտրոնացել էր միայն պետական պաշտոնյաների կողմից կատարված չարաշահումների (խախտումների) վրա: Այնուամենայնիվ, հետագա հանձնաժողովները կարևորել են հասարակությանը վնաս պատճառած բոլոր խախտումների հետաքննության անհրաժեշտությունը, լինի դա կատարված պետական իշխանության, թե այլ սուբյեկտների, այդ թվում՝ հակակառավարական ուժերի կողմից:

**- խախտումների աշխարհագրությունը.**

Բոլոր հանձնաժողովներն իրենց ուսումնասիրությունները կենտրոնացրել են այն պետության տարածքում, որտեղ հիմնվել է հանձնաժողովը: Այնուամենայնիվ, շատ խախտումներ և չարաշահումներ կարող են ընդգրկել նաև այլ երկրների տարածքները կամ դրանցում ներգրավված լինեն նաև այլ երկրների քաղաքացիներ: Ուստի կարող են լինել դեպքեր, երբ հանձնաժողովի իրավասությունների շրջանակը պետք է ներառի այլ երկրների հետ հնարավոր համագործակցություն հետաքննությունների իրականացման հարցերում:



## 2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

### Հանձնաժողովի անդամների ընտրությունը

Հանձնաժողովի անդամները պետք է ընտրվեն թափանցիկ մեխանիզմներով և ցանկալի է, որ ընտրությունն իրականացվի խորհրդակցությունների արդյունքում և որին մասնակցություն ունենան հասարակության տարբեր շերտեր: Որոշ հանձնաժողովներում անդամների ընտրության գործընթացը սկսվել է հանրության կողմից թեկնածուների առաջադրմամբ, թեկնածուներին ընտրող հանձնաժողովի ստեղծմամբ, հանձնաժողովի կողմից թեկնածուների ընտրությամբ և թեկնածուներին այն նշանակող մարմնին ներկայացնելու միջոցով:

Հանձնաժողովի անդամները ընտրվում են երկու եղանակով՝

- Բացառապես իրենց անձնական հատկանիշները, բարոյական նկարագիրը և հեղինակությունը հաշվի առնելով: Լատինական Ամերիկայի հանձնաժողովների մեծամասնությունում անդամները ընտրվել են այս սկզբունքով, ինչի շնորհիվ թեկնածուի հեղինակությունն ու լեգիտիմությունը «փոխանցվում է» հանձնաժողովին:

- Հաշվի առնելով թեկնածուի՝ այս կամ այն սոցիալական խմբին պատկանելը՝ խտրականության հնարավոր դրսևորումները մեղմելու համար: Այս օրինակին հետևել են Լատինական Ամերիկայից դուրս ստեղծված հանձնաժողովների մեծամասնությունը:

Հաջողված փորձ ունեցող հանձնաժողովներում անդամները ընտրվել են՝ հաշվի առնելով նրանց հեղինակությունն ու անձնական հատկանիշները, ապահովելով նաև սոցիալական տարբեր խմբերի ներկայացվածությունը:

Հարկ է արձանագրել, որ հանձնաժողովի քնականոն գործունեության ապահովման տեսանկյունից կենսական նշանակություն ունի հանձնաժողովի անդամներին անհրաժեշտ երաշխիքներ տրամադրելու հարցը՝ մասնավորապես, շեշտադրվում է նրանց անձեռնմխելիությամբ օժտելու խնդիրը: Այսպես, Վենեսուելի հանձնաժողովը, անդրադառնալով Վրաստանի արդարադատության ոլորտի խախտումների վերանայման





Ժամանակավոր հանձնաժողովին, նշել է, որ անհրաժեշտ է հանձնաժողովի անդամներին օժտել գործառույթային անձեռնմխելիությամբ<sup>14</sup>:

Բացի այդ, հանձնաժողովների անդամները չեն կարող ենթարկվել պատասխանատվության զեկույցի բովանդակության կամ ներկայացված առաջարկությունների համար<sup>15</sup>:

### **Հանձնաժողովի անդամների թիվը**

Հանձնաժողովի անդամների թիվը որոշելիս պետք է հաշվի առնել, որ այն պետք է ներկայացնի հասարակության բոլոր շերտերին՝ միաժամանակ ճկուն լինի կառավարելիության առումով: Շատ հանձնաժողովներ ունեցել են 3-17 անդամներ, ընդ որում՝ ցանկալի է կենտ թվով անդամներ՝ քվեարկության միջոցով որոշումների կայացումն ապահովելու համար:

### **Հանձնաժողովի անդամների կենսագրությունը**

Հանձնաժողովի անդամները պետք է ունենան անբասիր կենսագրություն՝ զերծ լինեն որևէ քրեական հետապնդումից, ներգրավված չլինեն որևէ հանցավոր գործունեության, մասնավորապես, մարդու իրավունքների խախտման կամ կոռուպցիոն գործունեության մեջ: Նրանք պետք է լինեն փորձառու մարդու իրավունքների կամ հանրային շահերի պաշտպանության ոլորտում, վայելեն հանրության անառարկելի հարգանքն ու վստահությունը և ներգրավված չլինեն կուսակցական-քաղաքական գործընթացներում: Պետք է ձեռնպահ մնալ քաղաքական կուսակցությունների

<sup>14</sup> St'u Joint Opinion of The Venice Commission and The Directorate For Justice and Human Dignity of The Directorate General of Human Rights And Rule of Law (Dg I) of The Council of Europe on The Draft Law on The Temporary State Commission on Miscarriages of Justice of Georgia, Adopted by The Venice Commission at its 95th Plenary Session (Venice, 14-15 June 2013)

(<https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD%282013%29013-e>)

<sup>15</sup> St'u Eduardo González, Drafting a Truth Commission Mandate: A Practical Tool, June 2013 ([https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Report-DraftingMandate-Truth-Commission-2013\\_0.pdf](https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Report-DraftingMandate-Truth-Commission-2013_0.pdf))



ղեկավարներին կամ անդամներին, խմբակցությունների ներկայացուցիչներին հանձնաժողովի կազմում ներառելու ցանկացած փորձից<sup>16</sup>:

Որպես հանձնաժողովի անդամի համար պարտադիր հատկանիշ քննարկվում է վերջինիս անկախությունը և հուսալիությունը՝ բացառելով նրա՝ քաղաքական ակտիվությունը կամ զինված ուժերում ներգրավվածությունը: Այդուհանդերձ, կան երկրներ, որոնք այլ մոտեցում են որդեգրել՝ հանձնաժողովի կազմում ներառելով ներկայացուցիչներ բոլոր քաղաքական ուժերից, ազգային փոքրամասնության և կրոնական համայնքներից<sup>17</sup>:

### **Բարեվարքություն**

Հանձնաժողովի անդամները պետք է անցնեն բարեվարքության ստուգում՝ երաշխավորելու համար նրանց կասկածելի կապերի բացակայությունը քննվելիք հարցերի կամ սուբյեկտների առնչությամբ: Հանձնաժողովի անդամները պետք է լինեն չեզոք և ընդունելի լինեն հակամարտող բոլոր կողմերի համար:

### **Լրիվ դրույքով աշխատանք**

Հանձնաժողովը արդյունավետ չի կարող գործել անդամների՝ ոչ լրիվ դրույքով աշխատելու դեպքում: Առավել նպատակահարմար է, երբ անդամները չեն զբաղվում այլ գործունեությամբ:

### **Մասնագիտական փորձառություն**

Անդամները պետք է բավարարեն մասնագիտական փորձի պահանջներին այնպիսի ոլորտներում, որոնք կարող են օգտակար լինել հանձնաժողովի գործունեության համար,

<sup>16</sup> Տե՛ս RULE-OF-LAW TOOLS FOR POST-CONFLICT STATES: Truth commissions, United Nations, New York and Geneva, 2006, էջ 13 (<https://www.ohchr.org/Documents/Publications/RuleoflawTruthCommissionsen.pdf>)

<sup>17</sup> Evelyne Schmid, The Diversity of Truth Commissions and Commissions of Inquiry, United States Institute of Peace, PeaceBrief118, January 12, 2012 (<https://www.usip.org/sites/default/files/PB%20118.pdf>)



մասնավորապես՝ մարդու իրավունքներ և սահմանադրական իրավունք, պատմություն, տնտեսագիտություն, դատաբժշկական փորձաքննություն, գենդերային ուսումնասիրություններ, սոցիալական մարդաբանություն, հոգեբանություն, բժշկություն, կրոն, լրագրություն, կոնֆլիկտաբանություն և այլն:



### 3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Միջազգային պրակտիկայում ճշմարտության հանձնաժողովներն ունեն ներքին կազմակերպական կառուցվածք, որը համապատասխանում է հանձնաժողովի նպատակներին և գործառույթներին: Օրենքի ուժով ձևավորված հանձնաժողովները ունեն նախապես սահմանված կառուցվածք՝ ստորաբաժանումներ, որոնք պատասխանատու են հետազոտությունների, հաղորդակցության և վարչական գործառույթների իրականացման համար:

**Հետազոտությունների գործառույթը** իրականացվում է իրավաբանների և հասարակական գիտությունների մասնագետներից բաղկացած ստորաբաժանումների կողմից: Այն ենթադրում է հետաքննությունների իրականացում և ամփոփիչ զեկույցի կազմում, որը ներառում է հանձնաժողովի եզրակացություններն ու առաջարկությունները:

**Հաղորդակցության գործառույթը** իրականացվում է հանձնաժողովի իրավասությունների վերաբերյալ հանրային իրազեկումների միջոցով:

**Վարչական գործառույթի** իրականացումն ուղղված է հանձնաժողովի պաշտած գործունեության ապահովմանը:

Օրինակ՝ Հարավաֆրիկյան Հանրապետության Ճշմարտության և Հաշտեցման հանձնաժողովը (The South African Truth and Reconciliation Commission (TRC) իր գործառույթներն իրականացնում էր 3 կոմիտեների միջոցով<sup>18</sup>

- Մարդու իրավունքների խախտումների կոմիտե (Human Rights Violations (HRV) Committee)

Կոմիտեի խնդիրն էր հետաքննել մարդու իրավունքների ոտնահարումները, որոնք տեղի են ունեցել 1960-ից 1994 թվականների ընթացքում՝ հիմնվելով Հանձնաժողովին արված հայտարարությունների (statements) վրա: Կոմիտեի խնդիրն էր՝ պարզել տուժողների ինքնությունը, նրանց գտնվելու վայրը, կրած վնասների բնույթը և չափը, խախտումների բնույթը: Մարդու իրավունքների կոպիտ խախտումներից տուժած անձանց

<sup>18</sup> The Committees of The Truth and Reconciliation Commission (<http://www.justice.gov.za/trc/trccom.html>)



հայտնաբերվելուց հետո նրանց տվյալները ներկայացվում էին Ռեպարացիայի և ռեաբիլիտացիայի կոմիտե (Reparation and Rehabilitation Committee):

- Ռեպարացիայի և ռեաբիլիտացիայի կոմիտե (Reparation and Rehabilitation (R&R) Committee)

Կոմիտեն կոչված էր աջակցություն ցուցաբերելու հանձնաժողովի գործունեությանը տուժողների արժանապատվության վերականգնման ուղղությամբ և առաջարկներ ներկայացնել տուժողների, նրանց ընտանիքների իրավունքների վերականգնման և ռեաբիլիտացիայի վերաբերյալ: Առաջարկությունների ներկայացման նպատակը խախտումների կրկնությունը թույլ չտալն է:

Նախագահի ֆոնդը, որը ֆինանսավորվում է Խորհրդարանի կողմից և մասնավոր ներդրումներից, ստեղծվել է տուժածներին անհապաղ միջանկյալ փոխհատուցում տրամադրելու համար՝ Նախագահի կողմից սահմանված կարգով:

- Համաներման կոմիտե (Amnesty Committee(AC))

Կոմիտեի առաջնային գործառույթն է համաներման դիմումների քննարկումը: Դիմումատուները կարող էին համաներում ստանալ քաղաքական նպատակներով կատարված ցանկացած այնպիսի գործողության և իրավախախտման, թույլ տրված անգործության համար, որը տեղի է ունեցել 1960-1993-թթ. ժամանակահատվածում:

Պերուի Ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովը (Truth and Reconciliation Commission of Peru) ունի առանձնահատուկ կառուցվածք. այն բաղկացած է տարբեր ստորաբաժանումներից՝ Պատմական պարզաբանումների բաժին, Հասարակական լսումների, վկաների և զոհերի պաշտպանության բաժին, Կենտրոնական հետազոտական թիմ, Հետևանքների, փոխհատուցումների և հաշտեցման բաժին, Հաղորդակցության և կրթության նախաձեռնությունների բաժին, ինչպես նաև Կենտրոնական հետքննությունների բաժին, որն էլ իր հերթին բաղկացած է տարբեր տարածքային ստորաբաժանումներից՝ ըստ վարչատարածքային բաժանման:



#### 4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հանձնաժողովները, ընդհանուր առմամբ, պետք է ունենան առնվազն հետևյալ լիազորությունները՝

- 1) հարցաքննել յուրաքանչյուրի, ով կարող է տրամադրել համապատասխան տեղեկատվություն,
- 2) համագործակցել պետական մարմինների հետ,
- 3) իրականացնել անհրաժեշտ այցելություններ,
- 4) կատարել հարցումներ,
- 5) իրականացնել հետախուզում և առգրավում, ինչպես նաև վկաների պաշտպանությանն ուղղված լիազորություններ:

Վերոգրյալից զատ, անհրաժեշտ է նաև փաստահավաք հանձնաժողովի գործառույթների լիարժեք և արդյունավետ իրականացման նպատակով ընձեռել նրան հնարավորություն՝ ապահովելու էական նշանակություն ունեցող տեղեկություններ պարունակող բացատրություն տալու դեպքում անձանց անձեռնմխելիությունը (use immunity): Սա նշանակում է որ անհատները պետք է վստահ լինեն, որ իրենց տրամադրած տեղեկատվությունը չի օգտագործվի իրենց դեմ քննվող քրեական գործի շրջանակներում: Այսինքն այս անձեռնմխելիությունը չի ենթադրում քրեական պատասխանատվությունից ազատում և չպետք է համարվի համաներման կամ ներման կիրառում. դրա միջոցով որոշակի ապացույցներ (վկայություններ) այլևս ապացուցողական ուժ չեն ունենում դատարաններում:

Հանձնաժողովին պետք է տրվեն նաև լիազորություններ երաշխավորելու, որ այն անձինք, ովքեր ոչ պատշաճ կերպով միջամտել են հանձնաժողովի աշխատանքին կամ գիտակցաբար կեղծ տեղեկություններ են հաղորդել հանձնաժողովին, կամ տվել են կեղծ ցուցմունքներ, ենթարկվեն վարչական և քրեական պատասխանատվության:

Հարկ է նկատել, որ որպես հանձնաժողովի լիազորություն է քննարկվում նաև անձանց՝ այդ թվում՝ պաշտոնատար անձանց, բերման ենթարկելը՝ հանձնաժողովի առջև





վկայություն տալու համար: Չնայած, Պերուի ճշմարտության հանձնաժողովը, օրինակ, միայն կարող էր տեղեկատվություն տրամադրելու հարցումներ ուղարկել<sup>19</sup>:

Իրավախախտում կատարած անձանց բացահայտելու դեպքում հանձնաժողովի լիազորությունների առումով առկա է 3 մոդել՝

- առաջարկել իրականացնել քրեական հետապնդում՝ կոնկրետ անձանց կամ ընդհանուր խախտումների մասով,
- շնորհել ներում. նման փորձ առկա է Հարավաֆրիկյան Հանրապետությունում, ինչը սակայն խորհուրդ չի տրվում կիրառել կամ կիրառելու դեպքում՝ պետք է երաշխավորել արդյունավետ և համակողմանի հետաքննությունների իրականացումը՝ պահպանելով նաև միջազգային քրեական իրավունքի սկզբունքները<sup>20</sup>,
- կիրառել քրեական պատասխանատվությունից սահմանափակ և պայմանական հրաժարում (waiver): Սա կիրառվել է Թիմոր-Լեստեի հանձնաժողովի դեպքում, ինչը համարվում է միջազգային ընդունելի մոդել: Այս դեպքում հանձնաժողովը անձին ոչ ծանր հանցագործությունների համար քրեական և քաղաքացիական պատասխանատվությունից ազատելու լիազորություն է ստանում, պայմանով, որ տուժողին տրվի հատուցում, իրականացվի վճարում և հրապարակվի ներողություն:

<sup>19</sup> Stú Truth and Reconciliation Commission of Peru (Comisión de la Verdad y Reconciliación) created by Supreme Decree N° 065-2001- PCM, June 4, 2001 (<http://www.cverdad.org.pe/lacomision/cnormas/normas01.php>)

<sup>20</sup> Stú RULE-OF-LAW TOOLS FOR POST-CONFLICT STATES: Truth commissions, United Nations, New York and Geneva, 2006, էջեր 11-12 (<https://www.ohchr.org/Documents/Publications/RuleoflawTruthCommissionsen.pdf>)



## 5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՑԸ

### 5.1 Զեկույցի բովանդակությունը

Հանձնաժողովի աշխատանքը եզրափակվում է զեկույցի հրապարակմամբ: Զեկույցը հիմնականում պետք է բաղկացած լինի հանձնաժողովի եզրահանգումներից՝ այն է պատմական իրադարձությունների նկարագրությունից և դրանց վերաբերյալ վերլուծությունից: Մեկ այլ կարևոր մաս պետք է նվիրված լինի պետության քաղաքականության ուղղություններին:

#### Վերջնական զեկույցը պետք է ներառի՝

- Հանձնաժողովի լիազորությունները, հանձնաժողովի աշխատանքին վերաբերող ընթացակարգային նորմերը և ցանկացած այլ համապատասխան նորմեր,
- Հանձնաժողովի անդամների և նրանց ընտրության կարգի վերաբերյալ տեղեկատվություն,
- Կառավարության, այլ պետական կամ մասնավոր կազմակերպությունների դերի նկարագրությունը հանձնաժողովում և հանձնաժողովի գործունեությունը,
- ցուցմունքների և հետաքննությունների ընթացքում օգտագործված մեթոդաբանության հստակ նկարագրություն,
- հանձնաժողովի կողմից կատարված եզրակացությունների հիմքում ընկած փաստաթղթերի և այլ ապացույցների նկարագրություն: Որոշ դեպքերում, ցուցմունքները կարող են ընդգրկվել զեկույցին կից հավելվածում, առանձին հրապարակված զեկույցում կամ ինտերնետում,
- զոհերի կամ խախտումներ կատարած անձանց ցուցակը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ինքնությունը պահպանվել է անվտանգության, դատավարական կամ այլ պատճառներով:



Որոշ հանձնաժողովներ, հատկապես վերջին շրջանում ձևավորված հանձնաժողովները, կազմել են բազմահատոր զեկույցներ՝ հազարավոր էջերից բաղկացած: Զեկույցի ծավալից ելնելով՝ պետք է կազմվեն նաև ամփոփ զեկույցներ:

## 5.2 Զեկույցի կառուցվածքը

Հանձնաժողովի զեկույցի կառուցվածքը, որպես կանոն, տարբեր է՝ կախված հանձնաժողովի լիազորություններից և վերջինիս կողմից առաջարկվող լուծումներից: Այդուհանդերձ, հիմնական բաղադրիչների հստակ և համապարփակ կարգով ներառումը կարևոր նշանակություն ունի: Սիերա Լեոնե ճշմարտության հարցերով հանձնաժողովի վերջնական զեկույցը նվիրված էր ամբողջ ծավալով նրա մանդատի, հանձնաժողովի ստեղծման և կառավարման բացատրությանը և դրա մեթոդաբանությանը:

Ամենամեծ բաժինը, որպես կանոն, հետազոտության արդյունքներն են: Կարող է լինել պատմական համատեքստի բացատրություն, տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ տեղեկություններ, դեպքերի ժամանակագրություն, խախտումների տեսակներ: Օրինակ՝ Արգենտինայում անհայտ կորածների ազգային հանձնաժողովը կազմել է զեկույցը՝ ներառելով դեպքերի աշխարհագրական նկարագրությունը, տարբեր վայրերում կատարված խախտումները, ինչպես նաև հանցավոր վարքագծի օրինակների մեջբերումը:

Օրինակ՝ Գվատեմալայի պատմական պարզաբանման հանձնաժողովը նախապատրաստել է պատմական և վերլուծական հեռանկար՝ ներկայացնելով հակամարտության հիմքում ընկած պատճառները, ժամանակի ընթացքում զարգացող բռնության բնույթը, ինստիտուցիոնալ պատասխանատվությունները, սոցիալական հետևանքները: Բացի այդ, զեկույցում ներառվել են մի շարք դեպքերի բացատրություններ՝ հիմնված օրինակների վրա՝ օժանդակելով ընթերցողին հասկանալու զոհերի հետ տեղի ունեցածը և հանցանքի կատարման եղանակները: Պերուական ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովը կազմել է առանձին գլուխներ, որնք ներառել են հետևյալ հարցերը. Ի՞նչ է տեղի ունեցել: Ի՞նչ՞ ու դա տեղի ունեցավ: Որո՞նք են տեղի ունեցածի



հետևանքները: Ի՞նչ պետք է անել, որպեսզի վերացվեն այդ հետևանքները և այդ դեպքերի կրկնությունը բացառվի:

Ձեկույցների Առաջարկություններ բաժինը սովորաբար մշակվում է բացահայտումներից հետո, սակայն կան դեպքեր՝ օրինակ Չիլիի զեկույցում առաջարկությունները ներկայացված են ըստ բաժինների, որոնք ներառում են պատմական և համատեքստային տեղեկություններ: Շատ զեկույցներ ուղեկցվում են ընդարձակ հավելվածներով, որոնք կարող են ներառել օրենսդրության ամբողջական տեքստը, զոհերի ցուցակները, պատմական ժամկետները կամ տրված ցուցմունքները: Այս հավելվածները կարող են հրապարակվել առաջնային հատորներից հետո, բայց պետք է միջոցներ ձեռնարկվեն տեղեկատվությունը ժամանակին հրապարակելու համար:

### **5.3 Ձեկույցը կազմելը**

Ձեկույց կազմելը բավականին բարդ գործընթաց է, որը պահանջում է նպատակային քննարկումների իրականացում՝ բազմազան ոլորտներում և որը պետք է ընդունվի հանձնաժողովի բոլոր անդամների համաձայնության արդյունքում: Հաջող զեկույցի կազմումը ներառում է՝

- տվյալների հավաքագրման համար վերջնաժամկետների սահմանում,
- հետազոտության հստակ ընթացակարգերի սահմանում,
- զեկույցի շարադրման հստակ վերջնաժամկետների սահմանում:

Վերջնաժամկետները պետք է ողջամիտ լինեն և հնարավորություն տան կատարելու արդյունավետ և համապարփակ հետազոտություններ, վերլուծություններ, կազմակերպչական աշխատանքներ, նախագծում, խմբագրում, ձևավորում և այլն:

### **5.3. Ձեկույցի հրապարակումը**

Հանձնաժողովը պետք է հրապարակի իր եզրափակիչ զեկույցը ինչպես տպագիր, այնպես էլ առցանց: Վերջնական զեկույցը պետք է ներկայացվի պետական իշխանության մարմիններին, իսկ անհրաժեշտության դեպքում նաև միջազգային կազմակերպություններին:



Թեև զեկույցը կազմվում է անկախ հանձնաժողովի կողմից, այդուհանդերձ կառավարությունը պետք է այն ընկալի որպես կառավարության զեկույց, որը կդառնա իր պաշտոնական քաղաքականության մաս:

Վերջնական զեկույցը կարող է հրապարակվել կառավարության կամ Ազգային ժողովի պաշտոնական կայքէջերով, այնուհետև քննարկվել Ազգային ժողովի նիստում (հրապարակման պահից վեց ամսվա ընթացքում)<sup>21</sup>՝ դրա վերաբերյալ կառավարությանը տալով հարցեր և քննարկել հետագա գործողությունների իրականացման անհրաժեշտությունը:

Կարևոր է, որ հանձնաժողովին տրվի համապատասխան լիազորություն և ռեսուրսներ վերջնական զեկույցը պաշտոնապես հրապարակելու համար: Հանձնաժողովը պետք է իրավասու լինի ինքնուրույն հրապարակել և հանրայնացնել զեկույցը: Հատկանշական է նաև, որ Արգենտինայի Անհետացածների հանձնաժողովի փորձից ելնելով՝ կարևորվել է միջանկյալ զեկույցների հրապարակումը, որն իրականացվում է հանձնաժողովի գործունեության ընթացքում: Դրա շնորհիվ ամրապնդվում է նաև հանձնաժողովի լեգիտիմությունը և գործունեության նկատմամբ վստահությունը<sup>21</sup>:

<sup>21</sup>Emilio Crenzel, Argentina's National Commission on the Disappearance of Persons: Contributions to Transitional Justice, The International Journal of Transitional Justice, Vol. 2, 2008, Advance Access publication: 17 June 2008, էջ 190 ([https://www1.essex.ac.uk/armedcon/themes/international\\_courts\\_tribunals/CONADEPoxfordjournal.pdf](https://www1.essex.ac.uk/armedcon/themes/international_courts_tribunals/CONADEPoxfordjournal.pdf))



## 6. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄՈՂԵԼԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարությանը համապատասխան՝ կարելի է քննարկել փաստահավաք հանձնաժողովի կազմավորման և գործունեության հետևյալ ուղղությունները՝

**1. հանձնաժողովի գործունեության նպատակները,** այն է՝ փաստերի օբյեկտիվ պարզում, պարզաբանում, խախտումների բացահայտում, տուժողների իրավունքների պաշտպանություն, ճանաչում և վերականգնում, բարեփոխումների խրախուսում:

**2. հանձնաժողովի մանդատի շրջանակը՝** խախտումների բնույթը (ըստ ռազմավարության ուղղությունների՝ ընտրական գործընթացներ, հետընտրական գործընթացում տեղի ունեցած քաղաքական հետապնդումներ, Հայաստանում պետության կամ հասարակության կարիքների համար գույքի հարկադիր օտարումներ, սեփականազրկումների այլ դրսևորումներ, ոչ մարտական պայմաններում զոհված զինծառայողներ), դրանց ժամանակահատվածը (ըստ ռազմավարության՝ 1991-2018թթ. ընկած ժամանակահատված): Պետք է քննարկել խախտումների սուբյեկտներին առանձնացնելու անհրաժեշտության հարցը:

**3. հանձնաժողովի գործառույթները,** այն է՝ տեղեկատվության հավաքագրում, հանրային քննարկումների և իրազեկումների կազմակերպում, քրեական հետապնդման մարմիններին աջակցություն (հաղորդումներ, նյութերի և փաստերի տրամադրում), հաշտեցման միջոցների կիրառում (հանրային երկխոսություններ, ներողությունների հրապարակում, փոխհատուցման ստացում և տրամադրում տուժողներին), զեկույցի կազմում, բարեփոխումների առաջարկությունների ներկայացում: Կարող են քննարկվել նաև հոգեկան առողջության աջակցության, ֆիզիկական պաշտպանության, սոցիալական ծառայությունների մատուցման և ֆինանսական աջակցության տրամադրման հնարավորությունները:





**4. հանձնաժողովի կազմավորման կարգը,** մասնավորապես՝ անդամների թեկնածուներ ընտրող հանձնաժողովի ձևավորում (ապաքաղաքականացվածություն, հեղինակություն), անդամների թեկնածուներին ներկայացվող պահանջներ (ապաքաղաքականացվածություն, հատուկ մասնագիտական գիտելիքներ, հեղինակություն), անդամների թեկնածուների բարեվարքության ստուգում (հայտարարագիր, հարցազրույց և այլն), թեկնածուների ընտրություն, թեկնածուների ներկայացում Ազգային ժողովին, անդամների ընտրություն Ազգային ժողովի կողմից:

**5. հանձնաժողովի լիազորությունները,** այն է՝ հարցաքննությունների/հարցազրույցների իրականացում, համագործակցություն պետական մարմինների հետ, այցելությունների իրականացում, հարցումների կատարում, վկաների պաշտպանություն, բացահայտված խախտումների առնչությամբ հանցագործության մասին հաղորդումների ներկայացում, միջանկյալ և վերջնական զեկույցների կազմում և ներկայացում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին առաջարկությունների ներկայացում:

**6. հանձնաժողովի կառուցվածքը.** հանձնաժողովի անդամներ՝ ըստ ղեկավարման ոլորտների, հետազոտությունների/խախտումների բացահայտման ստորաբաժանում, հաղորդակցության ապահովման ստորաբաժանում, վարչական ստորաբաժանում:

**7. հանձնաժողովի ներքին իրավական ակտերի շրջանակը** (հետազոտությունների իրականացման մեթոդոլոգիա, հաշտեցման մեխանիզմների կիրառման ընթացակարգեր, հետազոտությունների իրականացման և զեկույցի կազմման ժամկետներ և այլն)

**8. զեկույցի բովանդակությունը** (բացահայտված փաստեր, խախտումներ՝ ըստ ժամանակագրության և սուբյեկտների՝ համապատասխան հղումներով, ըստ խախտումների բնույթի, տեսակի, ոլորտի, տուժողների վերաբերյալ տվյալներ, իրականացված հաշտեցումներ և երկխոսություններ, ներկայացված հաղորդումներ,



կազմակերպված քննարկումներ, ներկայացված առաջարկություններ (հաշվի առնելով նաև մասնավոր կյանքի անձեռնմխելիության սկզբունքը), ինչպես նաև բացահայտումների իրականացման մեթոդաբանությունը, աշխարհագրությունը, բացահայտումների համար կիրառված մեխանիզմները, կատարված հարցումները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև այլ անձանց հետ համագործակցության ձևերը, դրանց արդյունքները):

**9. հանձնաժողովի գործունեության երաշխիքները** (նաև հարակից օրենքներով) հանձնաժողովի հետ համագործակցելու պարտականություն, հանձնաժողովի հարցումներին պատասխանելու պարտականություն, հանձնաժողովի առաջարկություններին արձագանքելու պարտականություն, առաջարկությունները չկատարելու դեպքում պատճառաբանված դիրքորոշում ներկայացնելու պարտականություն, հանձնաժողովի անդամների/աշխատակիցների այցելությունների ապահովման պարտականություն, վարչական և քրեական պատասխանատվություն հանձնաժողովի գործունեությանը խոչընդոտելու, կեղծ վկայություններ տալու համար: Անհրաժեշտ է դիտարկել նաև հանձնաժողովի անդամներին անձեռնմխելիություն տրամադրելու հարցը:

**10. հանձնաժողովի գործունեության դադարումը՝** վերջնական զեկույցի հրապարակմամբ կամ որոշակի գործողությունների իրականացումից հետո: